Լոռու մարզպետի ելույթը Բուժաշխատողների մասնագիտական տոնին նվիրված միջոցառմանը

24.06.2015թ.

Հարգելի բուժաշխատողներ:

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեր տոնը:

Յուրաքանչյուր տարի շնորհավորելով ձեզ՝ մասնագիտական տոնի առթիվ, ակամա համադրում եմ, թե ի՞նչ ունեինք մենք մեկ տարի առաջ, ի՞նչ բարեփոխումներ ենք կատարել անցած մեկ տարում , լուծում պահանջող հրատապ ի՞նչ խնդիրներ կան ոլորտում և, այդ ամենի հետ, իհարկե, մտահոգող ի՞նչ բացթողումներ, թերություններ ունենք , որոնք դեռևս չեն վերացվել:

Անկեղծ ասած, այս հարցերի մասին մտորելիս, թվերն ու փաստերը համեմատելիս ակնհայտորեն երևում է, որ մենք, ձեզ հետ միասին, բոլոր ուղղություններով բարեփոխումներ ունենք, որոնք արժանահիշատակ են հատկապես այս տոնական օրվա համար:

Կարծում եմ բոլորիս համար ուրախալի է հիշատակելը, որ առանց ընդհատումների ու պարապուրդների շարունակվում է Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցումը, «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկայում հակատու-բերկուլյոզային բաժանմունքի վերակառուցումը:

Ավարտվել է Ալավերդու բժշկական կենտրոնի ամբուլատոր մասի վերանորոգումը, որը վերազինվեց Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Սեփական միջոցներով մասնակի վերանորոգվել է Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկան:

«Դիակոնիա» բարեգործական կազմակերպության կողմից «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել ավելի քան 3 մլն. դրամ՝ հեռաբժշկության ներդրման նպատակով, ձեռք են բերվել պլանշետներ և համակարգչային տեխնիկա:

Ամբողջությամբ կոսմետիկ վերանորոգվել է Ստեփանավանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքը: «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության աջակցությամբ, պոլիկլինիկական մասնաշենքում հիմնովին վերանորոգվել են Մայրության դպրոցը, կանանց կոնսուլտացիայի բժիշկների սենյակները, Ստեփանավանի բժշկական կենտրոնի, Վանաձորի թիվ 4

պոլիկլինիկայի կանանց կոնսուլտացիաներում ստեղծվել են կոլպոսկոպիայի կաբինետներ:

Ամբողջությամբ հիմնանորոգվել են «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմում գործող Կաթնաղբյուրի և ՈՒրասարի բուժակ-մանկաբարձական կետերը:

Մի շարք առողջապահական ընկերություններում (Ստեփանավանի, Սպիտակի, Ալավերդու, Տաշիրի բժշկական կենտրոններում, Վանաձորի թիվ 1 և թիվ 4 պոլիկլինիկաներում, Վահագնիի, Դսեղի, Մարգահովիտի առողջության կենտրոններում, Օձունի բժշկական ամբուլատորիայում և այլն) ստեղծվել են «Ծնողական կրթության կենտրոններ», որոնք ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի կողմից, նաև՝ «Մայրության դպրոցներ»՝ որոնք ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից կառուցվել է «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքը՝48 մլն. դրամ արժողությամբ, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ օրերս՝ հունիսի 19-ին:

ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և մարզի առողջապահական ընկերություններում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2014թ. մասնակցել է մոտ 60 բժիշկ և բուժքույր, տուբերկուլոզի ազգային ծրագրի շրջանակներում տարբեր թեմաներով վերապատրաստվել է 9 բժիշկ և 33 բուժքույր:

Հարգելի բարեկամներ, եթե շարունակեմ թվարկումը, ապա ստիպված կլինեք երկար ունկնդրել ինձ: Դուք ինքներդ էլ այդ բարեփոխումների վկան ու մասնակիցն եք, իսկ ամփոփ տեղեկատվությանը, որ բաժանվել է ձեզ, կարող եք ծանոթանալ հանգիստ պայմաններում:

Միաժամանակ, գոհունակությամբ եմ ուզում նշել, որ մեր մարզի առողջապահության ոլորտում քիչ չեն պարտքի և պատասխանատվության բարձր զգացումով աշխատող մասնագետները, որոնց նվիրումն աննկատ չի մնում:

Ցավոք, ոլորտում դեռևս կան նաև արմատախիլ չարված առանձին ստվերոտ երևույթներ, որոնք արդարացիորեն հարուցում են բնակչության դժգոհությունը: Դրանց նկատմամբ առաջին հերթին անհաշտվողական պիտի լինեք դուք, քանզի բացասական երևույթների դեմ իրավական պայքարը շատ ավելի ցավոտ է լինում,

անդառնալի հետևանքներով՝ ստվեր գցելով ազնիվ աշխատողների ջանադիր ավանդի վրա: Մենք, միասնաբար, պարտավոր ենք Լոռու առողջապահությունը դարձնել առողջ, անթերի և օրինակելի:
Կրկին շնորհավորում եմ Ձեր մասնագիտական տոնը, մաղթում քաջառողջություն և աշխատանքային հաջողություններ: